ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 12 » « ապրիլի » 2022թ.**

ժամը 15:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ռ.Գրիգորյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Հ.Հարությունյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան

Բացակայում է

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Լ.Սինանյան

1. Տեղեկություններ «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.04.2022թ. կայացրած ԳԲՔԱ-ՆԳ-2022/28 որոշման վերաբերյալ

1.1. Ընդունել ի գիտություն գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գ.Ներսիսյանի 08.04.2022թ. կայացրած որոշումը, համաձայն որի Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ի բողոքը բավարարվել է.

1.2. «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը դադարեցնում է՝

1.2.1 17.03.2022թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5.2 կետով Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ի մասով կայացրած որոշումը՝ հայտում շտկում կատարելու վերաբերյալ պահանջը,

1.2.2 18.03.2022թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ի ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը,

1.2.3 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

1.3. Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 51-րդ հոդված 1-ին մասով և հիմք ընդունելով գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.04.2022թ. կայացրած ԳԲՔԱ-ՆԳ-2022/28 որոշումը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 28-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը վերականգնում է իր գործունեությունը:

2. Հանձնաժողովը որոշեց՝

(Լ.Ավետիսյան)

2.1. Գնահատող հանձնաժողովի 2022 թվականի մարտի 17-ի N 2 արձանագրության 5.2 կետով նշված Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ի փաթեթում բացակայող հայտի ապահովումը՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հրավերի հավելված №3), հրավերի 1-ին մասի 4.3 կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացվել է գնահատող հանձնաժողովին: Գնահատող հանձնաժողովը 2022 թվականի մարտի 18-ի N 4 արձանագրության 1.2.1 և 1.2.2 կետերով փաստել է, որ ուղեկցող գրությամբ ներկայացված հայտի ապահովման բնօրինակը համապատասխանում է հրավերի պահանջներին: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը դադարեցնում է Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ի նկատմամբ հայտի ապահովման վերաբերյալ 2022 թվականի մարտի 17-ի N 2 արձանագրության 5.2, 6.2, 7.2 և 11.2.2 կետերով արձանագրված պահանջը:

2.2. «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ն հրավերի 1-ին մասի 4.3 կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում, ուղեկցող գրությամբ, գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել 2022 թվականի մարտի 17-ի N 2 արձանագրության 5.1.2, 6.1.2, 7.1.2, 11.2.1.2 և 11.2.1.3 կետերով պահանջված հայտի ապահովման բնօրինակը՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հրավերի հավելված №3): Հաշվի առնելով, այս հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը 2022 թվականի մարտի 18-ի N 4 արձանագրության 2.1 կետով կայացրած որոշումը թողնում է անփոփոխ:

2.3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետը և Հրավերի 1-ին մասի 8.9 կետը՝ Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ի ներկայացրած հայտի անհամապատասխանությունը՝ արձանագրված 2022 թվականի մարտի 17-ի N 3 արձանագրության 1.1 կետով, շտկելու նպատակով, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է սույն նիստը:

2.4. Հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային եղանակով և համակարգի միջոցով տեղեկացնել Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը և Պատվիրատու gnumner@env.am և gnumner.mnp@yandex.ru էլ.փոստին, մինչև սույն արձանագրության 2.3 կետով սահմանված ժամկետի ավարտը, ներկայացնել հրավերի 1-ին մասին 4.3 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ մասնակիցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Լ.Ավետիսյան)

3.1. «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել սույն արձանագրության 2.3 կետով սահմանված ժամկետի ավարտման հաջորդ օրը, ժամը 11:00-ին, հասցեն՝ ք.Երևան, Կառավարական տուն 3, շրջակա միջավայրի նախարարության շենքում, 5-րդ հարկ, 529 սենյակ:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)		Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)		Ռ.Գրիգորյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)		Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)		Հ.Հարությունյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)		Լ.Զոհրաբյան